ՄԱՍ III-Ա

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Հայաստանի Հանրապետության 2010 թվականի պետական բյուջեի նախագծում (այսուհետև սույն մասում՝ Նախագիծ) եկամուտների ընդհանուր գումարը ծրագրվել է 676.7 մլրդ դրամի չափով կամ 2009 թվականի համար հաստատված[1] 858.6 մլրդ դրամ և 2008 թվականին փաստացի ստացված 722.8 մլրդ դրամ համադրելի գումարների համեմատությամբ համապատասխանաբար 21.2%-ով և 6.4%-ով պակաս, իսկ 2009 թվականի սպասողական 660.8 մլրդ դրամ համադրելի գումարի համեմատությամբ 2.4%-ով ավելի: 2008 թվականի փաստացի և 2009 թվականի ծրագրային ցուցանիշների համեմատ 2010 թվականի բյուջետային մուտքերի կրճատումը հիմնականում պայմանավորված է հարկերի և պետական տուրքերի գծով ծրագրված գումարների նվազմամբ, որն իր հերթին հետևանք է ընթացիկ տարում Հայաստանի տնտեսության ծավալների կրճատման (8 ամսվա փաստացի տվյալներով 2009 թվականի անվանական ՀՆԱ-ն 2008 թվականի նկատմամբ կրճատվել է 18.4%-ով): 2010 թվականի բյուջետային մուտքերի կազմում մեծ տեսակարար կշիռ կունենան հարկերն ու պետական տուրքերը՝ 78.8%, իսկ պարտադիր սոցիալական ապահովության վճարները, պաշտոնական դրամաշնորհները և այլ եկամուտները կապահովեն տարեկան բյուջետային մուտքերի համապատասխանաբար 15.6%, 2.2% և 3.4%:

---

[1] Այստեղ և այսուհետև սույն մասում որպես 2009 թվականի հաստատված ցուցանիշներ ներկայացվում են «ՀՀ 2009 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքով հաստատված և նույն օրենքի 11-րդ հոդվածի 6-րդ և 11-րդ մասերով ՀՀ կառավարությանը վերապահված իրավասությունների շրջանակներում ավելացված գումարների հանրագումարը, որը 24.09.09թ դրությամբ կազմել է 0.8 մլրդ դրամ:

Բացի այդ, 2008-2010թթ փաստացի/ծրագրային ցուցանիշների համադրելիությունն ապահովելու նպատակով.

1. 2008 թվականի փաստացի մուտքերը, 2009 թվականի տարեկան ցուցանիշները նվազեցված են՝
- ԱՄՆ կառավարության աջակցությամբ իրականացվող՝ ՀՀ-ին տրամադրվող «Հազարամյակի մարտահրավեր» դրամաշնորհի շրջանակներում ստացված/նախատեսված դրամաշնորհի մուտքերը՝ համապատասխանաբար 5.8 մլրդ դրամի և 21.5 մլրդ դրամի չափով, քանի որ 2010 թվականին այս դրամաշնորհային ծրագրի գծով մուտքեր չեն ծրագրվել:
- ԱԱՀ-ի վերադարձի՝ պետական բյուջեից ֆինանսավորվող գումարների չափով, քանի որ ի տարբերություն 2008-2009թթ, ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի նախագծով ծախսերի կազմում նման գումար չի ծրագրվել և 2010 թվականին նախատեսվում է ավելացված արժեքի հարկի վերադարձն իրականացնել այդ հարկատեսակի գծով տվյալ տարվա ընթացիկ մուտքերի հաշվին:
2. ՀՀ 2008 թվականի պետա կան բյուջեի փաստացի մուտքերի կազմում ներառված չեն 2008 թվականին փաստացի ստացված 34.7 մլրդ դրամի չափով մուտքերը, այդ թվում՝
- «ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն ՀՀ 2008 թվականի պետական բյուջեից ֆինանսավորված գումարների գծով՝ 4.8 մլրդ դրամ եկամուտները (ԱԱՀ-ի գծով՝ 4.1 մլրդ դրամ, պետական տուրքի գծով՝ 0.7 մլրդ դրամ):
- ՀՀ պետական կառավարման մարմինների 2008 թվականի արտաբյուջետային միջոցների փաստացի մուտքերը (որոնց գծով տվյալ տարվա պետական բյուջեի մասին օրենքով ծրագրային ցուցանիշներ չեն սահմանվել, սակայն «ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 18-րդ մասի համաձայն փաստացի ցուցանիշները արտացոլվել են ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի կատարման հաշվետվություններում), ընդամենը 29.6 մլրդ դրամ:
- «ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի մասին» ՀՀ օրենքի 11-րդ հոդվածի 16-րդ մասի համաձայն ինքնակամ կառուցված շենքերի և շինությունների օրինականացման վճարներից, պետական սեփականություն համարվող և Երևանի քաղաքապետարանին հանձնվող ինքնակամ կառույցների վարձակալությունից, ինչպես նաև Երևան քաղաքի վարչական սահմաններում թույլ տրված վարչական իրավախախտումների համար Երևանի քաղաքապետի որոշումներով նշանակված տույժերից փաստացի ստացված 0.3 մլրդ դրամը:

Ակնկալվում է, որ 2010 թվականին պետական բյուջեի եկամուտներ/ՀՆԱ հարաբերությունը կկազմի 21.0%՝ 2009 թվականի համադրելի ծրագրային 20.6%-ի, սպասողական 21.2%-ի[2] և 2008 թվականի փաստացի 19.8%-ի դիմաց: ՀՀ 2008-2010թթ պետական բյուջեների եկամուտների համեմատականը բերված է սույն բացատրագրի N1 աղյուսակում:

1. ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

Հարկային եկամուտները և պետական տուրքերը 2010 թվականի համար Նախագծում ծրագրվել են 533.0 մլրդ դրամի չափով կամ 2009 թվականի համար հաստատված և 2008 թվականի փաստացի[3] մուտքերից համապատասխանաբար 168.5 մլրդ դրամով և 60.1 մլրդ դրամով պակաս, սակայն ընթացիկ տարվա սպասողականը գերազանցում են 14.2 մլրդ դրամով: 2008 թվականի 4-րդ եռամսյակում սկսված և ընթացիկ տարում շարունակվող տնտեսական անկումը, որն ուղեկցվում է ինչպես արտադրության, այնպես էլ ներմուծման ծավալների կրճատմամբ (տես ստորև բերված աղյուսակ 1-ը), չէր կարող բացասաբար չանդրադառնալ հարկահավաքման մակարդակի վրա: Այսպես, անուղղակի հարկերի գծով ընթացիկ տարվա առաջին 8 ամիսներին հավաքագրված մուտքերը կազմում են նախորդ տարվա նույն ժամանակահատվածի համադրելի մուտքերի 78.2%-ը կամ պակաս են 43.0 մլրդ դրամով[4]: Հանքարդյունահանման ոլորտից գանձվող բնօգտագործման վճարների, ռոյալթիների և կոնցեսիոն վճարների գծով այս ցուցանիշները կազմում են 7.4% կամ պակաս են 9.1 մլրդ դրամով:

Այնուհանդերձ, մակրոտնտեսական կանխատեսումների համաձայն 2009 թվականի համեմատ 2010 թվականին Հայաստանի տնտեսության վիճակի հարաբերական բարելավումը հիմք ընդունելով, հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով 2010 թվականի մուտքերը ծրագրվել են ՀՆԱ-ի 16.6%-ի չափով՝ 2008 թվականի փաստացի 16.3%, 2009 թվականի ծրագրային 16.8% և սպասողական 16.6% համադրելի ցուցանիշների դիմաց:

Համապատասխան փաստացի և ծրագրային համադրելի ցուցանիշների հաշվարկով ՀՍԳ-ն 2009 թվականի համար սպասվում է 0.86-ի չափով: Հարկերի և ՀՆԱ-ի ցուցանիշների միաժամանակյա նվազման պարագայում սա նշանակում է, որ 2009 թվականին հարկերի նվազման տեմպը՝ 12.5% զիջում է անվանական ՀՆԱ-ի նվազման տեմպին՝ 14.5%: 2010 թվականին ՀՍԳ-ն կպահպանվի 2009 թվականի սպասողական մակարդակի շրջանակում և այն կկազմի 0.87՝ հարկերի 2.7% աճի և անվանական ՀՆԱ-ի 3.2% աճի պայմաններում:

---

[2] Այստեղ և այսուհետև սույն մասում ՀՆԱ-ի նկատմամբ 2009 թվականի համար հաստատված ցուցանիշների հարաբերությունները ՀՀ կառավարության 2009թ բյուջետային ուղերձում նշված համապատասխան ցուցանիշներն են: ՀՆԱ-ի նկատմամբ 2009 թվականի սպասողական ցուցանիշների հարաբերությունների հաշվարկներում օգտագործվել է 2009 թվականի ՀՆԱ-ի ներկայումս կանխատեսվող մեծությունը:

[3] Առանց ՀՀ 2008-2009թթ պետական բյուջեների՝ սույն մասի 1-ին տողատակի մեջ նշված այն եկամուտների, որոնք հաշվառվում են հարկային եկամուտների և պետական տուրքերի կազմում:

[4] Այս ցուցանիշները քննարկելիս պետք է հաշվի առնել ընթացիկ տարում ուժի մեջ մտած օրենսդրական փոփոխությունները, մասնավորապես «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքում, որով ԱԱՀ-ով չհարկվող շրջանառության շեմ սահմանվեց 58.35 մլն դրամը, նախկինում միայն անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց համար սահմանված 3.0 մլն դրամի դիմաց:

2010 թվականի հարկային եկամուտները ծրագրելիս օգտագործվել են այն մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումները, որոնք էական ազդեցություն ունեն առանձին հարկատեսակների հարկման բազայի ձևավորման վրա: Մասնավորապես հիմք են ընդունվել ստորև բերված աղյուսակում ներկայացված մակրոտնտեսական ցուցանիշները.

Աղյուսակ 1. 2009, 2010թթ համար կանխատեսվող առանձին մակրոտնտեսական ցուցանիշները

Ցուցանիշներ	2008	2009	2010
Անվանական ՀՆԱ (մլրդ դրամ)	3,646.0	3,116.2	3,214.6
ՀՆԱ-ի իրական աճ	6.8%	-15.6%	1.2%
ՀՆԱ-ի դեֆլյատոր	8.4%	1.2%	2.0%
1 ԱՄՆ դոլարի միջին տարեկան փոխարժեքը ՀՀ դրամով[5]	306.0	359.1	376.0
Ապրանքների ներմուծում (մլն ԱՄՆ դոլար)	-3775.5	-2,642.9	-2,664.0
Ապրանքների ներմուծման աճի տեմպը	35.0%	-30.0%	0.8%

Ինչպես և նախորդ տարիներին, 2010 թվականի հարկային եկամուտները ծրագրվել են ըստ նախորդ տարիների հավաքագրման և մակրոտնտեսական միջավայրի զարգացման միտումների, վարչարարական միջոցառումների իրականացումից ակնկալվող լրացուցիչ մուտքերի:

Նախորդ տարիների հավաքագրման և մակրոտնտեսական միջավայրի զարգացման միտումների հիման վրա հարկային եկամուտները և պետական տուրքերը 2010 թվականի համար ծրագրվել են 522.0 մլրդ դրամի չափով:

Վարչարարական միջոցառումների իրականացումից 2010 թվականին ակնկալվում է հավաքագրել 11.0 մլրդ դրամ:

Օրենսդրական փոփոխությունների ակնկալվող ազդեցությունը 2010 թվականի հարկային եկամուտների վրա ներկայումս դեռևս գնահատված չէ:

Սույն բացատրագրի առանձին հարկատեսակների վերաբերյալ բաժիններում ներկայացված կանխատեսումների մեթոդաբանությունն ու համապատասխան ծրագրային ցուցանիշները վերաբերվում են ըստ նախորդ տարիների հավաքագրման և մակրոտնտեսական միջավայրի զարգացման միտումների ծրագրված՝ 2010 թվականի հարկային եկամուտների և պետական տուրքերի գծով 522.0 մլրդ դրամի չափով մուտքերի գնահատականներին, որոնք կատարվել են համապատասխան մուտքերի գծով ընթացիկ տարվա հունվար-օգոստոս (պետական տուրքերի դեպքում՝ հունվար-հուլիս) ամիսների և տարեկան սպասողական, 2001-2008 թվականների տարեկան փաստացի մուտքերի, և, ինչպես արդեն վերը նշվեց, մակրոտնտեսական շրջանակում կատարված առանձին մակրոտնտեսական ցուցանիշների կանխատեսումների հիման վրա: Հարկ է նշել, որ այս գործոնի ազդեցությամբ 2010 թվականի հարկային եկամուտները կանխատեսվել են նախորդ տարիներին կիրառված կանխատեսման մեթոդներով:

[5] 2010թ ցուցանիշը հաշվարկային է՝ «ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 8.1-րդ մասի համաձայն այն 2009 թվականի սեպտեմբերի 1-ի դրությամբ ՀՀ շուկայում ձևավորված ԱՄՆ դոլարի միջին փոխարժեքն է: 2009 թվականի համար հաշվի է առնվել նաև ՀՀ շուկայում ձևավորված ԱՄՆ դոլարի փոխարժեքի փաստացի միջին ցուցանիշը այդ տարվա հունվար-օգոստոս ամիսների համար:

1.1. ԱՎԵԼԱՑՎԱԾ ԱՐԺԵՔԻ ՀԱՐԿ

Ավելացված արժեքի հարկի (այսուհետև՝ ԱԱՀ) գծով 2010 թվականի բյուջետային մուտքերը կանխատեսվել են 238.4 մլրդ դրամի չափով:

Ավելացված արժեքի հարկի գծով ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի նախագծի նշված մուտքերը ներառում են հարկման ընդհանուր ռեժիմով գանձվող գումարները, ինչպես նաև ծխախոտի արտադրանքի հաստատագրված վճարների կազմում ընդգրկված ԱԱՀ-ի հաշվարկային գումարները (3.7 մլրդ դրամ կամ ԱԱՀ-ի ընդհանուր մուտքերի 1.6%-ը): Ծխախոտի արտադրանքի հաստատագրված վճարները ծրագրվել և ներկայացվում են առանձին:

Ներքին շրջանառությունից հարկման ընդհանուր ռեժիմով գանձվող ԱԱՀ-ի գծով 2010 թվականի բյուջետային մուտքերը կանխատեսվել են մնացորդային եղանակով, որպես սպառումից և ապրանքների ներմուծումից գանձման ենթակա ԱԱՀ-ի գումարների տարբերություն:

Սպառումից գանձվելիք ԱԱՀ-ն գնահատելու համար դիտարկվել է ազգային հաշիվների համակարգի տնօրինվող եկամտի օգտագործման հաշվի «Վերջնական սպառման ծախսեր» հոդվածի փաստացի և մակրոտնտեսական զարգացումների շրջանակում կանխատեսված ցուցանիշները: Նախապես գնահատվել է հարկի փաստացի բազան[6]: Դրա համար վերջնական սպառման ծախսերը նվազեցվել են՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ տնտեսության որոշ ճյուղերում (գյուղատնտեսություն, շինարարություն, տրանսպորտ, առևտուր և ծառայություններ) ստեղծված ավելացված արժեքը ոչ լրիվ ծավալով է ենթակա ԱԱՀ-ով հարկման: Վերջնական սպառման ծախսերը նվազեցվել են նաև մակրոկանխատեսումների համաձայն 2010 թվականի համար ծրագրված զուտ անուղղակի հարկերի գումարի չափով: Հաջորդ նվազեցումը կատարվել է բենզինի, դիզվառելիքի և ծխախոտի սպառման հաշվարկային գումարի չափով, քանի որ առաջին երկու ապրանքատեսակների իրացումն ազատված է ԱԱՀ-ից (ներմուծումը հարկվում է հաստատագրված վճարով), իսկ ծխախոտի համար սահմանված է հաստատագրված վճար: Բացի նշված նվազեցումներից, ԱԱՀ-ի հարկման բազան մեծացվել է ակցիզային հարկի և մաքսատուրքի կանխատեսումային գումարների չափով, քանի որ վերջիններս, համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի, ներառվում են ԱԱՀ-ի հարկման բազայում:

2010 թվականին սպառումից գանձվելիք ԱԱՀ-ն հաշվարկվել է՝ այդ տարվա գնահատված փաստացի բազայի նկատմամբ կիրառելով ընթացիկ տարվա փաստացի դրույքաչափը[7]:

Ներմուծումից հարկման ընդհանուր ռեժիմով գանձվող ԱԱՀ-ի գծով 2010 թվականի բյուջետային մուտքերը կանխատեսելիս դիտարկվել է ապրանքների ներմուծումը: Դրա համար 2010 թվականի ներմուծման ծավալը նվազեցվել է թանկարժեք ու կիսաթանկարժեք քարերի[8], հանքահումքային մթերքների[9], ներմուծվող ծխախոտի[10] կանխատեսումային մա քսային արժեքների հանրագումարի չափով: Դրա հետ մեկտեղ ներմուծումից գանձվող ԱԱՀ-ի հարկման բազան մե-

---

[6] Այսուհետև՝ «փաստացի բազա» հասկացությունն իրենից ներկայացնում է ՀՆԱ-ի կամ ներմուծման՝ տվյալ հարկատեսակի համար հարկունակ մասը:

[7] Փաստացի կամ սպասողական (հաշվարկային) մուտքերի հարաբերությունը հաշվարկված փաստացի բազային:

[8] Թանկարժեք ու կիսաթանկարժեք քարերի ապրանքախմբում մեծ տեսակարար կշիռ է կազմում վերամշակման և հետագայում արտահանման նպատակով աղամանդե քարերի ներմուծումը, որը ԱԱՀ-ով չի հարկվում:

[9] Հանքահումքային մթերքների հիմնական մասը ԱԱՀ-ով չի հարկվում:

[10] Հարկվում է հաստատագրված վճարով:

ծացվել է ապրանքների ներմուծումից գանձվող մաքսատուրքի և ակցիզային հարկի կանխատեսումային գումարների չափով, քանի որ վերջիններս, համաձայն «Ավելացված արժեքի հարկի մասին» ՀՀ օրենքի, ներառվում են ԱԱՀ-ի հարկման բազայում: Այս եղանակով գնահատված 2010 թվականիփաստացի բազայի նկատմամբ կիրառելով ընթացիկ տարվա փաստացի դրույքաչափը, կանխատեսվել է 2010 թվականին ներմուծումից գանձվելիք ԱԱՀ-ն:

Այսպիսով, վերը նշված մեթոդով հաշվարկված ԱԱՀ-ից 2010 թվականին հավաքագրման ենթակա բյուջետային մուտքերի գումարին ավելացնելով ծխախոտի համար գանձվող հաստատագրված վճարների կազմում ներառված ԱԱՀ-ի հաշվարկային գումարները, ստացվում են 2010 թվականի ծրագրային մուտքերը ԱԱՀ-ից:

1.2. ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՆԵՐ՝ ծխախոտի արտադրանքի, ՀՀ ներմուծվող բենզինի և դիզվառելիքի համար

Ծխախոտի արտադրանքի և ՀՀ ներմուծվող բենզինի, դիզվառելիքի հաստատագրված վճարների գծով 2010 թվականի համար ծրագրվել է 48.9 մլրդ դրամի չափով մուտքեր:

2010 թվականին ծխախոտի արտադրանքի համար հաստատագրված վճարների հաշվարկի համար նախապես գնահատվել են ՀՀ-ում արտադրվող/իրացվող և ՀՀ ներմուծվող ծխախոտի միջին ամսական ծավալները՝ նախորդ տարիների և ընթացիկ տարվա հունվար-հուլիս ամիսների փաստացի տվյալների հիման վրա: Ծխախոտի արտադրման/իրացման և ներմուծման 2009 թվականի ֆիզիկական ծավալների համապատասխան սպասողական ցուցանիշների նկատմամբ կիրառելով 17 և ավելի տարիք ունեցող բնակչության թվաքանակի՝ վիճակագրական վերջին տվյալների հիման վրա հաշվարկված 2008 թվականի նկատմամբ 2009 թվականին գրանցված (տարեսկզբի դրությամբ) տարեկան աճը՝ 1.2%-ը, գնահատվել են 2010 թվականի համապատասխան ցուցանիշները:

ՀՀ ներմուծվող բենզինի և դիզվառելիքի համար հաստատագրված վճարները, ինչպես և նախորդ դեպքում, գնահատվել են ըստ ներմուծման միջին ամսական ծավալների կանխատեսումների, որն իր հերթին կատարվել է որոշակի ենթադրությունների հիման վրա: Առաջին ենթադրությունը վերաբերվում է 2010 թվականին ՀՀ-ում գրանցված, շահագործվող բենզին կամ դիզվառելիք օգտագործող տրանսպորտային միջոցների քանակին: Հաջորդ ենթադրությունը վերաբերվում է 2010 թվականին մեկ մեքենայի վառելիքի միջին օրական ծախսին: Նշված ենթադրությունների քանակական արտահայտության համար հիմք են հանդիսացել 2004-2008 թվականների փաստացի ցուցանիշները:

Ծխախոտի արտադրանքի և ՀՀ ներմուծվող բենզինի, դիզվառելիքի հաստատագրված վճարների հաշվարկային գումարները ՀՀ օրենսդրությամբ սահմանված համամասնություններով բաշխվել են ըստ առանձին հարկատեսակների՝ ԱԱՀ-ի, ակցիզային հարկի և մաքսատուրքի:

1.3. ԱԿՑԻԶԱՅԻՆ ՀԱՐԿ

Ակցիզային հարկի գծով 2010 թվականի բյուջետային մուտքերը գնահատվել են 53.8 մլրդ դրամի չափով:

2010 թվականի կանխատեսվող գումարի գերակշիռ մասը՝ 82.1%-ը կամ 44.2 մլրդ դրամը կազմում է ծխախոտի արտադրանքի և ՀՀ ներմուծվող բենզինի, դիզվառելիքի համար հաստատագրված վճարներում ներառված ակցիզային հարկի հաշվարկային գումարը:

Ինչպես և ԱԱՀ-ի դեպքում, հաշվարկները կատարվել են ըստ հարկման ընդհանուր ռեժիմով և հաստատագրված վճարների տեսքով գանձվող գումարների: Հարկման ընդհանուր ռեժիմով 2010 թվականին գանձվելիք ակցիզային հարկի գումարները կանխատեսվել են ներքին շրջանառությունից և ներմուծումից:

Հարկման ընդհանուր ռեժիմով գանձվող ակցիզային հարկի 2010 թվականի տարեկան մուտքերը ներքին շրջանառությունից և ներմուծումից գնահատելիս հաշվի են առնվել 2010 թվականի համար կանխատեսվող սպառման և ապրանքների ներմուծման իրական աճի տեմպերը (1.4% և 0.8%) և ընթացիկ տարվա համապատասխան սպասողական մուտքերը:

1.4. ՇԱՀՈՒԹԱՀԱՐԿ

ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի մուտքերը շահութահարկի գծով կանխատեսվել են 78.6 մլրդ դրամի չափով:

Շահութահարկի գծով բյուջետային եկամուտների կանխատեսման նպատակով դիտարկվել են ազգային հաշիվների համակարգի եկամուտների ձևավորման հաշվի «Տնտեսության զուտ շահույթ և զուտ խառը եկամուտներ» (ըստ ճյուղերի) հոդվածի փաստացի և կանխատեսված մակրոտնտեսական ցուցանիշները, որոնց հիման վրա գնահատվել է շահութահարկի փաստացի բազան: Հաշվի առնելով այն հանգամանքը, որ տնտեսության որոշ ճյուղերում (գյուղատնտեսություն, շինարարություն, տրանսպորտ) ստեղծված շահույթը ոչ լրիվ ծավալով է հարկվում շահութահարկով, տնտեսության զուտ շահույթը վիճակագրական տվյալների հիման վրա ճշգրտվել (նվազեցվել) է նշված ճյուղերի՝ շահութահարկով չհարկվող զուտ շահույթի հաշվարկային գումարի չափով: Շահութահարկի գծով 2010 թվականի բյուջետային մուտքերը գնահատվել են վերը նշված մեթոդով 2009 համար կանխատեսված հարկման բազայի և փաստացի դրույքաչափի (հաշվարկված ըստ շահութահարկի 2009 թվականի սպասողականի և 2008 թվականի հարկման բազայի) հիման վրա:

1.5. ԵԿԱՄՏԱՀԱՐԿ

Եկամտահարկի գծով 2010 թվականի բյուջետային մուտքերը կանխատեսվել են 64.1 մլրդ դրամի չափով: Հաշվարկները կատարված են ըստ եկամտի ստացման հիմնական աղբյուրների:

Աշխատանքի վարձատրությունից և դրան հավասարեցված այլ վճարումներից եկամտահարկի կանխատեսումներում, ինչպես և շահութահարկի դեպքում, մակրոտնտեսական կանխատեսված ցուցանիշների և առանձին վիճակագրական տվյալների հիման վրա գնահատվել է հարկման փաստացի բազան: Դրա համար դիտարկվել է ՀՆԱ-ի կառուցվածքը, մասնավորապես՝ ազգային հաշիվների համակարգի եկամուտների ձևավորման հաշվի «Վարձու աշխատողների աշխատանքի վարձատրություն» հոդվածը: Հետագա հաշվարկներում այս ցուցանիշը նվազեցվել է տնտեսության մեջ զբաղվածների կանխատեսվող թվաքանակին համապատասխան չհարկվող

նվազագույն աշխատավարձի (30000 դրամ) և վարձու աշխատողների կողմից վճարվող պարտադիր սոցիալական ապահովության վճարների (աշխատավարձի 3%-ը) հանրագումարի չափով:

Ֆիզիկական անձանց եկամտի այլ աղբյուրներից գանձվող (ձեռնարկատիրական գործունեություն, ավանդներ և այլն) եկամտահարկի հաշվարկները կատարված են փաստացի դրույքաչափի մեթոդի կիրառմամբ և հիմնված են ազգային հաշիվների համակարգի եկամուտների ձևավորման հաշվի «Տնտեսության զուտ շահույթ և զուտ խառը եկամուտներ» (ըստ ճյուղերի) հոդվածի փաստացի և մակրոտնտեսական զարգացումների շրջանակում կանխատեսված ցուցանիշների վրա:

Եկամտի նշված երկու աղբյուրներից եկամտահարկի գծով 2010 թվականի բյուջետային մուտքերը գնահատվել են 2010 թվականի հարկման բազայի և ընթացիկ տարվա փաստացի դրույքաչափի համապատասխան կանխատեսումային մեծությունների հիման վրա:

1.6. ՄԱՔՍԱՏՈՒՐՔ

2010 թվականի բյուջետային մուտքերը մաքսատուրքի գծով գնահատվել են 27.4 մլրդ դրամի չափով:

2010 թվականի մաքսատուրքի կանխատեսվող գումարը ներառում է ՀՀ ներմուծվող ծխախոտի համար հաստատագրված վճարում ներառված մաքսատուրքի հաշվարկային գումարը 1.0 մլրդ դրամի չափով:

Այս հարկատեսակի դեպքում ևս հաշվարկները կատարվել են հարկման ընդհանուր ռեժիմով և հաստատագրված վճարների տեսքով գանձվող գումարների համար առանձին: Հարկման ընդհանուր ռեժիմով գանձվելիք գումարները կանխատեսվել են մաքսատուրքի փաստացի բազայի գնահատականի հիման վրա, որի առանձին տարրերի հաշվարկման մեթոդը ներկայացված է սույն բացատրագրի՝ ներմուծումից գանձվող ավելացված արժեքի հարկին վերաբերվող համապատասխան բաժնում:

1.7. ՀԱՍՏԱՏԱԳՐՎԱԾ ՎՃԱՐՆԵՐ՝ օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակների համար

Օրենքով սահմանված գործունեության առանձին տեսակների համար հաստատագրված վճարների գծով 2010 թվականին գանձվելիք գումարները ծրագրվել են 25.8 մլրդ դրամի չափով:

2010 թվականի մուտքերը հաշվարկվել են ըստ գործունեության առանձին տեսակների, հաշվի առնելով 2010 թվականին առևտրի (0.2%), ծառայությունների (3.8%) ոլորտներում ակնկալվող տնտեսական աճի, ներմուծման աճի (0.8%), ինչպես նաև համապատասխան վճարների գծով մուտքերի 2007, 2008 թվականների հարկային սահմանության գործակիցների[11] միջինացված ցուցանիշը:

[11]ՀՆԱ-ի տվյալ ճյուղի 1 տոկոս աճին համապատասխանող հարկի տոկոսային աճը:

1.8. ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԵՎ ԲՆՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ, ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՎՃԱՐՆԵՐ

ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի մուտքերը բնապահպանական և բնօգտագործման, ճանապարհային վճարների գծով կանխատեսվել են 9.9 մլրդ դրամի չափով:

2010 թվականի մուտքերը գնահատվել են ըստ վճարների առանձին տեսակների, հաշվի առնելով 2002-2009թթ փաստացի/սպասողական մուտքերը, արդյունաբերության ճյուղի 2010 թվականին ակնկալվող տնտեսական աճի՝ 3.1%-ի (հարկային մարմինների կողմից գանձվող վճարների դեպքում) կամ ապրանքների ներմուծման աճի՝ 0.8%-ի (մաքսային մարմինների կողմից գանձվող վճարների դեպքում) տեմպերը:

1.9. ԱՅԼ ՀԱՐԿԱՅԻՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ [12]

Այլ հարկային եկամուտների գծով 2010 թվականին գանձվելիք գումարները ծրագրվել են 3.9 մլրդ դրամի չափով:

1.10. ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԵՐ

Պետական տուրքերի գծով 2010 թվականի բյուջետային մուտքերը Նախագծով ծրագրվել են 20.2 մլրդ դրամի չափով՝ 2009 թվականի համար հաստատված 23.7 մլրդ դրամի, սպասողական 20.0 մլրդ դրամի և 2008 թվականին փաստացի ստացված 21.6 մլրդ դրամի[13] դիմաց (համապատասխանաբար 3.5 մլրդ դրամով պակաս, 0.2 մլրդ դրամով ավելի և 1.4 մլրդ դրամով պակաս):

Պետական տուրքերի գծով 2010 թվականի բյուջետային մուտքերի կանխատեսումները կատարվել են ըստ 2000-2009 թվականների փաստացի հավաքագրումների միտումների, հաշվի առնելով ՀՀ օրենսդրության մեջ կատարված առանձին փոփոխություններն ու լրացումները, ինչպես նաև պետական տուրքի յուրաքանչյուր տեսակի առանձնահատկությունները: Ընդհանուր առմամբ կանխատեսումներում կիրառվել է 3 մոտեցում.

ա) եթե 2009 թվականին գրանցվել է տվյալ պետական տուրքի գծով մուտքերի անկում նախորդ տարվա նկատմամբ, ապա 2010 թվականի մուտքերը կանխատեսվել են 2009 թվականի սպասողականին հավասար,

բ) եթե ընթացիկ տարում պետական տուրքերի տվյալ տեսակի գծով պետական բյուջեի մուտքերը դրսևորել են առանձնահատկություններ (տարեկան կամ ամսական կտրվածքով), ապա կանխատեսումները կատարվել են փորձագիտական գնահատականներից ելնելով,

---

[12] Ներառում է հանրային ծառայությունների կարգավորման պարտադիր վճարները, ռադիոհաճախականության օգտագործման թույլտվության տրամադրման վճարները, մետաղական օգտակար հանածոների արդյունահանումից վճարվող ռոյալթիները, ուսումնասիրության կամ արդյունահանման լիցենզառուի, ինչպես նաև ուսումնասիրության և հանքարդյունահանման հատուկ լիցենզառուի կողմից վճարվող կոնցեսիոն վճարը, այլ հարկային եկամուտները, պետական բյուջե վճարման ենթակա հողի հարկն ու գույքահարկը, արտոնագրային վճարները:

[13] Առանց ՀՀ 2008 թվականի պետական բյուջեի՝ սույն մասի 1-ին տողատակում նշված 0.7 մլրդ դրամ այն եկամուտների, որոնք հաշվառվում են պետական տուրքերի կազմում:

գ) մնացած դեպքերում հաշվի է առնվել տվյալ պետական տուրքի գծով բազային տարիների[14] տարեկան աճի (միջինացված) տեմպերը:

Պետական տուրքի առանձին տեսակների գծով 2010 թվականի բյուջետային մուտքերի կանխատեսումները, հաշվարկման մեթոդների համառոտ նկարագրությունը, ինչպես նաև ծրագրային և փաստացի ցուցանիշների համեմատականները ներկայացվում են ստորև:

1. Դատարան տրվող հայցադիմումների, դիմումների ու գանգատների, դատարանների վճիռների և որոշումների դեմ վերաքննիչ և վճռաբեկ բողոքների համար, ինչպես նաև դատարանների կողմից փաստաթղթերի պատճեններ տալու համար գանձվող պետական տուրքերի գծով 2010 թվականի մուտքերը փորձագիտական եղանակով գնահատվել են 621.7 մլն դրամ, որը համապատասխանաբար 152.7 մլն դրամով և 142.8 մլն դրամով գերազանցում է 2009 թվականի համար հաստատված և 2008 թվականի փաստացի մակարդակները, իսկ սպասողական ցուցանիշից պակաս է 151.1 մլն դրամով:

2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն ստանալու և Հայաստանի Հանրապետության քաղաքացիությունը փոխելու համար գանձվող պետական տուրքի գծով 2010 թվականի մուտքերը կանխատեսվել են (փորձագիտական եղանակով) 10.5 մլն դրամի չափով, 2009 թվականի համար հաստատված 9.4 մլն դրամի, սպասողական 19.4 մլն դրամի և 2008 թվականին փաստացի ստացված 9.6 մլն դրամի դիմաց:

3. Հյուպատոսական ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2010 թվականի մուտքերը կանխատեսվել են 2,032.5 մլն դրամի չափով՝ 2009 թվականի համար հաստատված 2,392.2 մլն դրամի, սպասողական 1,921.2 մլն դրամի և 2008 թվականին փաստացի ստացված 2,024.9 մլն դրամի դիմաց:

Կանխատեսումներում հիմք է ընդունվել պետական տուրքի այս տեսակի գծով 2009 թվականի առաջին 7 ամիսների փաստացի մուտքերը, 2000-2008 թվականների տարեկան համապատասխան գումարում առաջին 7 ամիսների մուտքերի ունեցած տեսակարար կշիռների միջինացված ցուցանիշը, ինչպես նաև 2007 թվականի նկատմամբ 2008 թվականի տարեկան աճի տեմպի ցուցանիշը:

4. Պետական գրանցման համար գանձվող պետական տուրքերի գծով 2010 թվականի մուտքերը կանխատեսվել են 2,848.2 մլն դրամի չափով, որը համապատասխանաբար 1,658.0 մլն դրամով և 619.4 մլն դրամով պակաս է 2009 թվականի համար հաստատված և 2008 թվականին փաստացի ստացված ցուցանիշներից, իսկ սպասողական ցուցանիշից ավելի է 22.1 մլն դրամով:

Պետական գրանցման համար գանձվող պետական տուրքերի գերակշռող մասը՝ 2,750.6 մլն դրամը կամ 96.6 %-ը 2010 թվականին ապահովվելու է պետական տուրքի հետևյալ 5 խմբերի հաշվին՝

- ավտոմեքենայի պետական համարանիշ տալու և կորցրածը վերականգնելու, գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների գրանցման և պետական համարանիշ տալու և կորցրածը վերականգնելու համար գանձվող պետական տուրքեր, որոնց գծով 2010 թվա-

[14] Տվյալ պետական տուրքի կանխատեսումներում բազային են այն տարիները, որոնց փաստացի մուտքերը համադրելի են կանխատեսվող տարվա մուտքերին:

կանի մուտքերը ծրագրվել են սպասողական ցուցանիշի՝ 799.9 մլն դրամի չափով (պետական գրանցումից 2010 թվականի պետական տուրքերի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 28.1 %-ը), որը 2009 թվականի հաստատված և 2008 թվականին փաստացի ստացված ցուցանիշներից պակաս է համապատասխանաբար 284.0 մլն դրամով և 234.0 մլն դրամով:

Պետական տուրքի այս տեսակի գծով 2009 թվականի սպասողական ցուցանիշը ծրագրվել է, ելնելով դրանց գծով 2009 թվականի առաջին 7 ամիսների և 2008 թվականի վերջին 5 ամիսների փաստացի մուտքերից:

- ավտոմեքենայի (մոտոցիկլետի) տեխնիկական անձնագիր (գրանցման վկայական) և կորցրած տեխնիկական անձնագրի (գրանցման վկայականի) կրկնօրինակ տալու համար գանձվող պետական տուրքեր, որոնց գծով 2010 թվականի մուտքերը ծրագրվել են սպասողական ցուցանիշի՝ 285.0 մլն դրամի չափով (պետական գրանցումից 2010 թվականի պետական տուրքերի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 10.0%-ը), 2009 թվականի հաստատված 661.5 մլն դրամի և 2008 թվականին փաստացի ստացված 465.4 մլն դրամի դիմաց:

  Պետական գրանցման համար գանձվող պետական տուրքերի նշված տեսակի գծով 2009 թվականի սպասողական ցուցանիշը ծրագրվել է ըստ 2009 թվականի առաջին 7 ամիսների փաստացի մուտքերի, 2004-2008 թվականների տարեկան համապատասխան գումարում առաջին 7 ամիսների մուտքերի ունեցած տեսակարար կշիռների միջինացված ցուցանիշի:

  Այս և նախորդ տուրքերի գծով եկամուտների նվազումը պայմանավորված է ավտոմեքենաների առուվաճառքի կրճատմամբ (ըստ վիճակագրական տվյալների 2008 թվականի հունվար-հուլիսի համեմատ 2009 թվականի համապատասխան ժամանակահատվածում՝ 51%-ով), ինչպես նաև ավտոմեքենաների ներմուծման կրճատմամբ («ներմուծում ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ՀՀ ներմուծված ավտոտրանսպորտային միջոցներից ՀՀ ոստիկանության «Ճանապարհային ոստիկանություն» ծառայության կողմից հաշվառված ավտոմեքենաների քանակը 2008 թվականի հունվար - օգոստոս ամիսների համեմատ 2009 թվականի համապատասխան ժամանակահատվածում՝ 54 %-ով):

- Լիցենզառուներին տրանսպորտային միջոցների պարտադիր տեխնիկական զննության համապատասխան նմուշի փաստաթուղթ տրամադրելու համար գանձվող պետական տուրքեր, որոնց գծով 2010 թվականի մուտքերը ծրագրվել են 747.8 մլն դրամի չափով (պետական գրանցումից 2010 թվականի պետական տուրքերի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 26.3%-ը), 2009 թվականի հաստատված 746.3 մլն դրամի, սպասողական 726.7 մլն դրամի և 2008 թվականին փաստացի ստացված 630.6 մլն դրամի դիմաց:

  Պետական տուրքի նշված տեսակի գծով 2009 թվականի սպասողական, 2010 թվականի ծրագրային ցուցանիշները կանխատեսվել են համապատասխան տարում տեխնիկական զննություն անցնող մեքենաների թվաքանակի գնահատականի հիման վրա:

- գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցում կատարելու համար գանձվող պետական տուրքեր, որոնց գծով 2010 թվականի մուտքերը կանխատեսվել են սպասողական ցուցանիշի՝ 779.0 մլն դրամի չափով (պետական գրանցումից 2010 թվականի պետական տուրքերի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 27.4%-ը), 2009 թվականի համար հաստատված և 2008 թվականին փաստացի ստացված համապատասխանաբար 1,255.0 մլն դրամի և 1,040.8 մլն դրամի դիմաց:

  Պետական տուրքի այս տեսակի գծով 2009 թվականի սպասողական ցուցանիշը ծրագրվել է ըստ 2009 թվականի առաջին 7 ամիսների փաստացի մուտքերի, 2005-2008 թվականների տարեկան համապատասխան գումարում առաջին 7 ամիսների մուտքերի ունեցած տեսակարար կշիռների միջինացված ցուցանիշի:
- պետական ռեգիստրում գրանցման ենթակա տնտեսվարող սուբյեկտներից գանձվող պետական տուրքեր, որոնց գծով 2010 թվականի մուտքերը ծրագրվել են 2009 թվականի սպասողական ցուցանիշի՝ 138.9 մլն դրամի (պետական գրանցումից 2010 թվականի պետական տուրքերի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 4.9 %-ը) չափով, որը 2009 թվականի հաստատված և 2008 թվականի փաստացի ցուցանիշներից պակաս է համապատասխանաբար 24.2 մլն դրամով և 19.6 մլն դրամով:

  Պետական տուրքի այս տեսակի գծով 2009 թվականի սպասողական ցուցանիշը ծրագրվել է հաշվի առնելով 2009 թվականի առաջին 7 ամիսների փաստացի մուտքերը, 2001-2008 թվականների տարեկան մուտքերում առաջին 7 ամիսների մուտքերի տեսակարար կշիռների միջինացված ցուցանիշը:

5. Մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման իրավունքի վկայագիր տալու համար գանձվող պետական տուրքերի գծով 2010 թվականի մուտքերը ծրագրվել են ընթացիկ տարվա սպասողական մուտքերի մակարդակին մոտ՝ 0.9 մլն դրամի չափով:

6. Գյուտերի, օգտակար մոդելների, արդյունաբերական նմուշների, ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների, ֆիրմային անվանումների, ինտեգրալ միկրոսխեմաների տոպոլոգիաների իրավական պաշտպանության հետ կապված իրավաբանական նշանակություն ունեցող գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2010 թվականի մուտքերը փորձագիտական եղանակով կանխատեսվել են 258.6 մլն դրամի չափով, որը 2009 թվականի համար հաստատված, սպասողական և 2008 թվականի փաստացի ցուցանիշներից պակաս է համապատասխանաբար 37.5 մլն դրամով, 24.5 մլն դրամով և 20.1 մլն դրամով:

7. Ֆիզիկական անձանց տրվող իրավաբանական նշանակություն ունեցող փաստաթղթերի, որոշակի ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2010 թվականի մուտքերը կանխատեսվել են 2009 թվականի սպասողական ցուցանիշի՝ 2,735.0 մլն դրամի չափով՝ 2009 թվականի համար հաստատված 3,118.0 մլն դրամի և 2008 թվականին փաստացի ստացված 2,952.3 մլն դրամի դիմաց:

Պետական տուրքի այս տեսակի գծով 2009 թվականի սպասողականի հաշվարկներում հիմք է ընդունվել 2009 թվականի առաջին 7 ամիսների փաստացի մուտքերը, 2006-2008 թվական-

ների տարեկան համապատասխան գումարում առաջին 7 ամիսների մուտքերի ունեցած տեսակարար կշիռների միջինացված ցուցանիշը:

8. Լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու համար գանձվող պետական տուրքերի գծով 2010 թվականի մուտքերը կանխատեսվել են 3,750.4 մլն դրամի չափով, որը 2009 թվականի համար հաստատված, սպասողական և 2008 թվականին փաստացի ստացված մուտքերից պակաս է համապատասխանաբար 516.3 մլն դրամով, 137.0 մլն դրամով և 531.0 մլն դրամով: Պետական տուրքերի այս խմբից 2010 թվականի մուտքերի գերակշիռ մասը՝ 2,820.6 մլն դրամը կամ 75.2 %-ը, նախատեսվում է ապահովել էներգետիկայի, շահումով խաղերի և վիճակախաղերի, առողջապահության, պետական սեփականություն հանդիսացող ընդերքի և բնական ռեսուրսների օգտագործման, քաղաքաշինության բնագավառներում և սննդամթերքի արտադրության համար տնտեսվարող սուբյեկտների կողմից լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնելու համար վճարվելիք պետական տուրքերի գումարների հաշվին: Կանխատեսումներն իրականացվել են, ելնելով օրենքով նախատեսված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների վերաբերյալ համապատասխան պետական կառավարման մարմինների կողմից տրամադրված անհրաժեշտ քանակական տվյալներից, 2008 թվականի փաստացի և 2009 թվականի սպասողական մուտքերից:

9. Այլ ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2010 թվականի մուտքերը կանխատեսվել են 7,915.1 մլն դրամի չափով, որը 2009 թվականի համար հաստատված և 2008 թվականին փաստացի ստացված մուտքերից պակաս է համապատասխանաբար 766.6 մլն դրամով և 204.6 մլն դրամով, իսկ 2009 թվականի սպասողական ցուցանիշից ավելի է 375.0 մլն դրամով:

Նշված պետական տուրքերից 2010 թվականի բյուջետային մուտքերի գերակշռող մասը՝ 7,386.0 մլն դրամը (93.3 %), ապահովվելու է պետական տուրքի հետևյալ 2 տեսակների հաշվին՝

- ՀՀ-ից օդային տրանսպորտի միջոցներով ֆիզիկական անձանց (օդային ուղևորների) ելքի համար գանձվող պետական տուրք, որի գծով 2010 թվականի մուտքերը կանխատեսվել են 6,708.0 մլն դրամի չափով (այլ ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2010 թվականի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 84.7 %-ը), որը 2009 թվականի համար հաստատված և 2008 թվականի փաստացի ցուցանիշներից պակաս է համապատասխանաբար 711.0 մլն դրամով և 295.8 մլն դրամով, իսկ 2009 թվականի սպասողական ցուցանիշից ավելի է 258.0 մլն դրամով:

  Կանխատեսումներում հիմք է ընդունվել ուղևորափոխադրումների թվի փոփոխությունը 2009 թվականի առաջին կիսամյակի ընթացքում և ակնկալվող աճը 2010 թվականին:

- վարորդական իրավունքի, գյուղատնտեսական ինքնագնաց մեքենաների և օդային փոխադրամիջոցների վարման իրավունքի վկայական և կորցրած վկայականի կրկնօրինակը տալու համար գանձվող պետական տուրքեր, որոնց գծով 2010 թվականի մուտքերը կանխատեսվել են 678.0 մլն դրամի (այլ ծառայությունների կամ գործողությունների համար գանձվող պետական տուրքերի գծով 2010 թվականի կանխատեսվող մուտքերի ամբողջ ծավալի 8.6%-ը) չափով՝

2009 թվականի համար հաստատված, սպասողական և 2008 թվականին փաստացի ստացված 607.2 մլն դրամի, 597.9 մլն դրամի և 537.9 մլն դրամի դիմաց:

Կանխատեսումներում հիմք են ընդունվել պետական տուրքի այս տեսակի գծով 2009 թվականի առաջին 7 ամիսների փաստացի մուտքերը, 2007-2008 թվականների տարեկան համապատասխան գումարում առաջին 7 ամիսների մուտքերի ունեցած տեսակարար կշիռների միջինացված ցուցանիշը, ինչպես նաև 2003-2009թթ տարեկան աճի տեմպերի միջինացված ցուցանիշը:

2. ՊԱՐՏԱԴԻՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՎՃԱՐՆԵՐ

Նախագծով պարտադիր սոցիալական ապահովության վճարների գծով ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի մուտքերը գնահատվել են 105.2 մլրդ դրամի չափով, 2009 թվականին հաստատված 128.4 մլրդ դրամի, սպասողական 103.7 մլրդ դրամի և 2008 թվականի փաստացի ստացված 105.0 մլրդ դրամի դիմաց:

Կանխատեսումներում ընթացիկ տարվա սպասողականը գնահատվել է, հաշվի առնելով 2009 թվականի առաջին 8 ամիսների փաստացի մուտքերը, 2006-2008 թվականների տարեկան մուտքերում առաջին 8 ամիսների մուտքերի տեսակարար կշիռների միջինացված ցուցանիշը: 2010 թվականի ցուցանիշը ծրագրվել է, հիմք ընդունելով 2009 թվականի սպասողական մուտքերի՝ ՀՆԱ-ի նկատմամբ հարաբերությունը:

3. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ

Օտարերկրյա պետություններից և միջազգային կազմակերպություններից 2010 թվականին ակնկալվում է ստանալ 15.0 մլրդ դրամի չափով պաշտոնական դրամաշնորհներ:

Մասնավորապես, 2010 թվականին պաշտոնական դրամաշնորհների ստացում է նախատեսվում՝

- Եվրոպական հարևանության շրջանակներում ՀՀ-ԵՄ գործողությունների ծրագրով նախատեսված դրամաշնորհային ծրագրերից՝ 14.0 մլն Եվրո կամ 7.6 մլրդ դրամ,
- ԳԴՀ զարգացման վարկերի բանկի աջակցությամբ իրականացվող ՀՀ Շիրակի մարզի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի վերականգնման աջակցության, ինչպես նաև ՀՀ Շիրակի, Լոռու և Արմավիրի մարզերի ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի մասնավոր կառավարման հայեցակարգերի ներդրման դրամաշնորհային ծրագրերի շրջանակներում՝ 7.8 մլն ԱՄՆ դոլար կամ 2.9 մլրդ դրամ,
- Վերակառուցման և զարգացման Եվրոպական բանկի աջակցությամբ իրականացվող Սևանա լճի բնապահպանական դրամաշնորհային ծրագրի շրջանակներում՝ 2.8 մլն ԱՄՆ դոլար կամ 1.0 մլրդ դրամ,
- Այլ ծրագրերի շրջանակներում՝ 3.5 մլրդ դրամ:

4. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ

Նախագծով այլ եկամուտների գծով մուտքերը 2010 թվականի համար ծրագրվել են 23.4 մլրդ դրամի չափով՝ 2009 թվականի հաստատված և սպասողական համապատասխանաբար 14.8 մլրդ դրամի և 24.3 մլրդ դրամի, 2008 թվականին փաստացի ստացված համադրելի 15.8 մլրդ դրամի դիմաց:

Այլ եկամուտների գծով 2010 թվականի համար ծրագրված տարեկան մուտքերը 2009 թվականի հաստատված ծրագիրը գերազանցում են 8.6 մլրդ դրամով, 2008 թվականի փաստացի ցուցանիշը՝ 7.6 մլրդ դրամով, իսկ 2009 թվականի սպասողականից պակաս են 0.9 մլրդ դրամով: 2008 թվականի փաստացի, 2009 թվականի ծրագրային ցուցանիշների նկատմամբ 2010 թվականի համար ծրագրված մուտքերի գերազանցումը հիմնականում պայմանավորված է միասնական գանձապետական հաշվի ժամանակավորապես ազատ բյուջետային միջոցները ՀՀ կենտրոնական բանկում ավանդադնելու, ինչպես նաև արտաքին աղբյուրներից ստացված վարկային ռեսուրսները ՀՀ ռեզիդենտներին որպես վարկ տրամադրելու դիմաց ստացվող տոկոսավճարների աճով:

Այլ եկամուտների կազմում հաշվառվող առանձին եկամտատեսակների գծով 2010 թվականի մուտքերը ծրագրվել են՝ հաշվի առնելով դրանց առանձնահատկությունները, նախորդ տարիների մուտքերի հավաքագրման միտումները, ինչպես նաև ընթացիկ տարվա հունվար-հուլիս ամիսների փաստացի մուտքերը: Ստորև ներկայացվում են 2010 թվականի այլ եկամուտների գծով կանխատեսվող մուտքերի՝ 2009 թվականի հաստատված և սպասողական, 2008 թվականի փաստացի մուտքերի նկատմամբ համեմատականը, ինչպես նաև կատարված հաշվարկներում կիրառված մեթոդաբանության համառոտ նկարագրությունը:

1. Պետական հիմնարկների հաշվեկշիռներում հաշվառվող գույքի, համայնքների վարչական տարածքներից դուրս գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության և օգտագործման դիմաց գանձվող վարձավճարները 2010 թվականի համար կանխատեսվում են շուրջ 808.4 մլն դրամի չափով, որից՝

1.1 պետական ձեռնարկությունների և գույքի (բացառությամբ հողի) վարձակալության վարձավճարների գծով՝ 681.7 մլն դրամ, 2009 թվականի հաստատված 733.9 մլն դրամի, սպասողական 726.1 մլն դրամի և 2008 թվականին փաստացի ստացված 757.2 մլն դրամի դիմաց: Կանխատեսումներում հիմք են ընդունվել պետական կառավարման մարմինների կողմից ներկայացված տեղեկությունները 2009, 2010 թվականներին վարձակալության տրված (տրվելիք) տարածքների մակերեսների և վարձակալական պայմանագրերի համաձայն վճարվելիք վարձավճարների վերաբերյալ, ինչպես նաև համապատասխան բյուջետային մուտքերի գծով գանձապետական տվյալները:

1.2 համայնքների վարչական տարածքներից դուրս գտնվող պետական պահուստի ֆոնդի հողերի վարձակալության և օգտագործման դիմաց վճարվող վարձավճարները ծրագրվել են 98.5 մլն դրամի չափով՝ 2009 թվականի հաստատված 97.2 մլն դրամի, սպասողական 91.9 մլն դրամի և 2008 թվականին փաստացի ստացված 92.5 մլն դրամի դիմաց: Կանխատեսումներում հաշվի են առնվել 2009-2010 թվականներին վարձակալության տրված (տրվելիք) հողատարածքների մակերեսների, վճարված վարձավճարների վերաբերյալ (ըստ առանձին հողատեսքերի՝ վարելահող, արոտավայր,

խոտհարք և այլ հողատեսքեր) ՀՀ մարզպետարանների կողմից ներկայացված տեղեկությունները, ինչպես նաև համապատասխան փաստացի մուտքերի վերաբերյալ գանձապետական տվյալները:

1.3 պետական անտառների և անտառային հողերի օգտագործման և վարձակալության գծով ծրագրվել են մուտքեր 28.3 մլն դրամի չափով՝ 2009 թվականի հաստատված 28.1 մլն դրամի, սպասողական 24.2 մլն դրամի և 2008 թվականին փաստացի ստացված 19.1 մլն դրամի դիմաց:

Կանխատեսումներում հիմք են ընդունվել 2008, 2009թթ փաստացի մուտքերը:

2. Բանկերում և ֆինանսավարկային հաստատություններում պետական բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների, իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից ստացվող շահաբաժիններից 2010 թվականին ակնկալվում են 6,257.0 մլն դրամի չափով մուտքեր: Մասնավորապես.

2.1 Բանկերում և ֆինանսավարկային հաստատություններում պետական բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացվող տոկոսավճարների գծով մուտքերը ծրագրվել են 5,927.0 մլն դրամ՝ 2009 թվականի հաստատված 3,700.0 մլն դրամի, սպասողական 8,500.0 մլն դրամի և 2008 թվականի փաստացի ստացված 6,482.9 մլն դրամի դիմաց: 2010 թվականի մուտքերն ապահովվելու են հիմնականում ի հաշիվ ՀՀ կենտրոնական բանկի և ՀՀ ֆինանսների նախարարության միջև կնքված «Հաշվի սպասարկման մասին» պայմանագրի հիման վրա ժամանակավորապես ազատ բյուջետային միջոցները ՀՀ կենտրոնական բանկում ավանդադնելու դիմաց վճարվելիք տոկոսավճարների:

2.2 Իրավաբանական անձանց կապիտալում կատարված ներդրումներից ստացվող շահաբաժիններից 2010 թվականին ակնկալվում են 330.0 մլն դրամի չափով մուտքեր՝ 2009 թվականի համար ծրագրված 375.0 մլն դրամի, սպասողական 491.7 մլն դրամի և 2008 թվականին փաստացի ստացված 796.7 մլն դրամի դիմաց: Այս եկամտատեսակի գծով 2010 թվականի համար ակնկալվող մուտքերի նվազումը 2008 թվականի փաստացի ցուցանիշի նկատմամբ հիմնականում պայմանավորված է 2008 թվականին մեկանգամյա բնույթ ունեցող գումարների ստացմամբ:

Շահաբաժինների գծով 2010 թվականի կանխատեսվող մուտքերը ծրագրելիս հաշվի են առնվել հետևյալ գործոնները.

ա) ՀՀ կառավարության 2001 թվականի դեկտեմբերի 5-ի «Պետության սեփականություն հանդիսացող բաժնեմաս ունեցող ընկերություններում շահութաբաժինների Հայաստանի Հանրապետության պետական բյուջե վճարման գործընթացում պետական բաժնեմասը տնօրինող մարմինների աշխատանքը կազմակերպելու մասին» N 1194 որոշմամբ պետական մասնակցության դիմաց պետական բյուջե կատարվելիք շահույթից մասհանումների 20%-ի չափով սահմանումը, մինչև 3 մլն դրամ զուտ շահույթ ապահոված 50 տոկոս և ավելի պետական մասնակցությամբ ընկերությունների ազատումը ՀՀ պետական բյուջե շահաբաժին վճարելուց, ինչպես նաև հաշվետու տարվա զուտ շահույթի և նախորդ տարվա վերջի դրությամբ կուտակված վնասի 3 մլն դրամը գերազանցող դրական տարբերության՝ պետական բյուջե կատարվելիք շահույթի մասհանումը 20%-ի չափով սահմանումը:

բ) մասնավորեցված ընկերությունների կողմից ՀՀ կառավարության համապատասխան որոշումներով ամրագրված շահաբաժինների գծով առկա պարտքերի մարման հնարավորությունը:

3. Պետության կողմից տրված վարկերի օգտագործման դիմաց տոկոսավճարները 2010 թվականին կանխատեսվում են 5,915.0 մլն դրամի չափով: Մասնավորապես.

3.1 ՀՀ ռեզիդենտներին տրամադրված վարկերի օգտագործումից 2010 թվականին ակնկալվում է ստանալ 5,720.1 մլն դրամ: Ծրագրային մուտքերի բաշխվածքն ըստ առանձին վարկային ծրագրերի հետևյալն է.

ա) Համաշխարհային Բանկի օժանդակությամբ իրականացվող Գյուղատնտեսական բարեփոխումների աջակցության ծրագրով ՀՀ բանկերին (Արդշինինվեստբանկ, Հայգյուղփոխբանկ, Կոնվերս բանկ) առ 01.01.2009թ. տրամադրվել է 2,900.0 հազ. ԱՄՆ դոլարի չափով վարկ (տարեկան 6.5%, LIBOR և LIBOR+1 տոկոսադրույքներով), որի օգտագործման դիմաց ՀՀ 2010 թվականի պետական բյուջե կմուտքագրվի շուրջ 150.2 հազ. ԱՄՆ դոլար կամ 56.5 մլն դրամ (1 ԱՄՆ դոլար= 376.03 ՀՀ դրամ) տոկոսավճար:

բ) Հյուսիս-արևմտյան շրջանների գյուղատնտեսական ծառայությունների ծրագրի շրջանակներում (համաձայն 1998 թվականի հունվարի 13-ին ՀՀ կառավարության և Հայգյուղփոխբանկի միջև կնքված «Սուբսիդավորմամբ ֆինանսավորման պայմանագրի» Հոդված 2.02-ի) Հայգյուղփոխբանկին առ 01.01.2009 թվականը տրամադրվել է 1,633.6 հազ. ԱՄՆ դոլարի չափով նպատակային վարկ: Դրա դիմաց տարեկան 5.99% տոկոսադրույքով հաշվարկվել է 93.6 հազ. ԱՄՆ դոլարի կամ շուրջ 35.2 մլն դրամի չափով տոկոսավճար:

գ) Համաշխարհային Բանկի աջակցությամբ իրականացվող Գյուղատնտեսական ծառայությունների վարկային ծրագրի շրջանակներում (համաձայն 2002 թվականի հունվարի 11-ին ՀՀ կառավարության և Հայգյուղփոխբանկի, «Շեն» բարեգործական հասարակական կազմակերպության «Անիվ» հիմնադրամի միջև կնքված «Սուբսիդավորմամբ ֆինանսավորման համաձայնագրի») առ 01.01.2009 թվականը Հայգյուղփոխբանկին տրամադրվել է 2,828.0 հազ. ԱՄՆ դոլար վարկ: Դրա դիմաց առ 01.01.2009թ տարեկան 5.99% տոկոսադրույքով հաշվարկվել է 169.4 հազ. ԱՄՆ դոլարի կամ շուրջ 63.7 մլն դրամի չափով տոկոսավճար:

դ) Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ծրագրի շրջանակներում (համաձայն ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության և Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ-ի միջև 2005 թվականի հունիսի 28-ին կնքված N 653-AM ենթավարկային պայմանագրի) Գյուղական տարածքների տնտեսական զարգացման ԾԻԳ-ին տրամադրվել է 10,450.0 հազ. ՀՓԻ-ին համարժեք ԱՄՆ դոլարի չափով վարկ: Դրա դիմաց տարեկան 0.75% տոկոսադրույքով հաշվարկվել է 66.8 հազ. ԱՄՆ դոլարի կամ շուրջ 25.1 մլն դրամի չափով տոկոսավճար:

ե) Գյուղական ձեռնարկատիրության և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման ծրագրի շրջանակներում (համաձայն 2005 թվականի հուլիսի 20-ին ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության և Գյուղական ձեռնարկատիրության և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման ԾԻԳ-ի միջև կնքված ենթավարկային պայմանագրի) Գյուղական ձեռնարկատիրության և փոքրածավալ առևտրային գյուղատնտեսության զարգացման ԾԻԳ-ին տրամադրվել է 13,300.0 հազ. ՀՓԻ-ին համարժեք ԱՄՆ դոլարի չափով վարկ: Դրա դիմաց տարեկան 0.75% տոկոսադրույքով հաշվարկվել է 40.5 հազ. ԱՄՆ դոլարի կամ շուրջ 15.2 մլն դրամի չափով տոկոսավճար:

զ) ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության և «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի միջև կնքված ենթավարկային պայմանագրերի համաձայն (2004 թվականի փետրվարի 16-ին կնքված N 4(48)/CP-2004, 2005 թվականի փետրվարի 7-ին կնքված N 4(BEC)-2005 և 1999 թվականի նոյեմբերի 30-ին կնքված պայմանագրեր) «Բարձրավոլտ էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին տրամադրվել է 28,393.4 հազ. ԱՄՆ դոլարի (տարեկան 0.5% տոկոսադրույքով) և 4,700.0 հազ. Եվրոյի (տարեկան 5% տոկոսադրույքով) չափով վարկ: Դրա դիմաց ՀՀ 2010 թվականի պետական բյուջե կմուտքագրվի շուրջ 165.8 հազ. ԱՄՆ դոլար և 228.7 հազ Եվրո կամ շուրջ 185.8 մլն դրամ (1 Եվրոն=539.53 ՀՀ դրամ) տոկոսավճար:

է) ՀՀ առևտրային բանկերում ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորող համակարգի ամրապնդման ծրագիրն իրականացնելու նպատակով համաձայն 2005 թվականի հուլիսի 28-ին KfW-ի (Կրեդիտանշտալդ Ֆյուր Վիդերաուֆբաու) և Հայաստանի Հանրապետության կառավարության՝ ի դեմս ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության և Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի միջև կնքված պայմանագրի, KfW-ն տրամադրել է 3,500.0 հազ. Եվրո գումարի վարկ, որի օգտագործման դիմաց ՀՀ 2010 թվականի պետական բյուջե կմուտքագրվի շուրջ 26.3 հազ. Եվրո կամ շուրջ 14.2 մլն դրամ տոկոսավճար:

ը) ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության և «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ի միջև 2005 թվականի մայիսի 12-ին և 2007 թվականի մայիսի 4-ին կնքված ենթավարկային պայմանագրերի համաձայն «Էլեկտրաէներգետիկական համակարգի օպերատոր» ՓԲԸ-ին տրամադրվել է 297.3 հազ. ԱՄՆ դոլարի (տոկոսադրույքը՝ փոփոխական) և 1,521.7 մլն ճապոնական իենի (տարեկան 1.8% տոկոսադրույքով) չափով վարկ, որի օգտագործման դիմաց ՀՀ 2010 թվականի պետական բյուջե կմուտքագրվի շուրջ 24.3 հազ. ԱՄՆ դոլար և 4,799.1 հազ. ճապոնական իեն կամ շուրջ 28.5 մլն դրամ (10 իեն=40.39 ՀՀ դրամ) տոկոսավճար:

թ) 2006 թվականի մայիսի 5-ին կնքված N 1/2006 ապրանքային վարկի պայմանագրի շրջանակներում «Վանաձորի բաղնիքային տնտեսություն» ՊՓԲԸ-ին տրամադրվել է 361.3 հազ. ԱՄՆ դոլարի չափով վարկ, որի դիմաց տարեկան 7.77% տոկոսադրույքով հաշվարկվել է 28.0 հազ. ԱՄՆ դոլարի կամ շուրջ 10.5 մլն դրամի չափով տոկոսավճար:

ժ) ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության և «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ի միջև 2002 թվականի հունիսի 21-ին կնքված ենթավարկային պայմանագրի համաձայն «Միջազգային էներգետիկ կորպորացիա» ՓԲԸ-ին տրամադրվել է 17,895.2 հազ. Եվրո վարկ: Դրա դիմաց տարեկան 0.75% տոկոսադրույքով հաշվարկվել է 132.5 հազ. Եվրոյի կամ շուրջ 71.5 մլն դրամի չափով տոկոսավճար:

ժա) ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարության և «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի միջև 2004 թվականի հուլիսի 12-ին կնքված ենթավարկային պայմանագրի համաձայն «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ին տրամադրվել է 4,458.0 մլն ճապոնական իեն վարկ: Դրա դիմաց տարեկան 1.8% տոկոսադրույքով հաշվարկվել է 23.2 մլն ճապոնական իենի կամ շուրջ 93.6 մլն դրամի չափով տոկոսավճար:

ժբ) 2004 թվականի փետրվարի 24-ին կնքված N 1(01)/CP-2004 ենթավարկային պայմանագրի շրջանակներում «Հայկական ատոմակայան» ՓԲԸ-ին տրամադրվել է 1,757.1 մլն դրամ վարկ:

Դրա դիմաց տարեկան 0.5% տոկոսադրույքով հաշվարկվել է շուրջ 12.5 մլն դրամի չափով տոկոսավճար:

ժգ) ՀՀ կառավարության 2009 թվականի հունիսի 26-ի N 717-Ա որոշմամբ հաստատված տնտեսության վարկավորման ծրագրի շրջանակներում տրամադրված վարկերի օգտագործման դիմաց հաշվարկվել է շուրջ 5,107.8 մլն դրամի չափով տոկոսավճար:

3.2 ՀՀ ոչ ռեզիդենտին տրամադրված վարկերի գծով 2010 թվականի բյուջետային մուտքերը կգոյանան Վրաստանի Հանրապետությանը տրամադրված վարկի սպասարկման տոկոսավճարներից, որոնք կկազմեն 518.2 հազ. ԱՄՆ դոլար կամ մոտ 194.9 մլն դրամ:

4. Տիրազուրկ, ժառանգության իրավունքով, ինչպես նաև ֆիզիկական և իրավաբանական անձանցից (բացառությամբ ՀՀ համայնքների, միջազգային կազմակերպությունների և օտարերկրյա պետությունների) նվիրատվության կարգով պետությանը որպես սեփականություն անցած դրամական միջոցներից, ինչպես նաև հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող գույքի օտարումից ՀՀ 2010 թվականի պետական բյուջեի եկամուտները ծրագրվել են 25.0 մլն դրամի չափով՝ 2009 թվականի հաստատված 21.4 մլն դրամի, սպասողական 50.2 մլն դրամի և 2008 թվականին փաստացի ստացված 24.2 մլն դրամի դիմաց:

5. Իրավախախտումների համար գործադիր, դատական մարմինների կողմից կիրառվող պատժամիջոցներից 2010 թվականի մուտքերը ծրագրվել են 1,777.2 մլն դրամի չափով՝ 2009 թվականի համար ծրագրված 1,919.4 մլն դրամի, սպասողական 2,353.6 մլն դրամի և 2008 թվականին փաստացի ստացված 2,171.4 մլն դրամի դիմաց: Կանխատեսումները կատարված են ըստ գանձող մարմինների՝ հաշվի առնելով տվյալ մարմնի կողմից կիրառվող պատժամիջոցների գծով ընթացիկ տարվա առաջին 7 ամիսների փաստացի մուտքերը, 2004-2008 թվականների տարեկան համապատասխան գումարում առաջին 7 ամիսների մուտքերի (առանց մեկանգամյա բնույթ ունեցող մուտքերի) ունեցած միջին տեսակարար կշիռները, այս բնագավառում իրականացվող քաղաքականության առանձնահատկությունները, իսկ առանձին դեպքերում՝ նաև 2010 թվականին ակնկալվող տնտեսական աճի ցուցանիշները:

6. Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ պետական բյուջե մուտքագրվող այլ եկամուտների գծով 2010 թվականի պետական բյուջեի մուտքերը գնահատվել են 8,612.0 մլն դրամի չափով: Եկամուտների այս խմբի մեծ մասը կազմում են ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի ստորաբաժանումների կողմից 2010 թվականին մատուցվելիք ծառայությունների դիմաց ստացվելիք վճարները՝ 2.6 մլրդ դրամի չափով և ռադիոհաճախականության օգտագործման վճարները՝ 4.6 մլրդ դրամի չափով: Այս խմբի հաջորդ խոշոր բաղադրիչներն են «Արմավիա» ՍՊԸ-ի կողմից օդուղիների հատկացման դիմաց վճարը, որը 2010 թվականի համար ծրագրվել է 1 մլն ԱՄՆ դոլար կամ 376.0 մլն դրամ, հայկական երկաթուղու համակարգի վերաբերյալ կոնցեսիոն պայմանագրով նախատեսված տարեկան վճարը, որը 2010 թվականի համար ծրագրվել է 200.0 մլն դրամ և «Կոնցեսիայի մասին» ՀՀ օրենքով սահմանված բոնուսը, որի 2010 թվականի ծրագրային ցուցանիշը 60.0 մլն դրամ է: